ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

10 նոյեմբերի 2025թ. **N 33-Ա**

ք. Էջմիածին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱԶԳԱՅԻՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 05.11.2025թ.ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության (այսուհետ՝ Դիմումատու) 05.11.2025թ. դիմումը՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

1.1. Դիմումատուն 05.11.2025թ. թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացրել է դիմում, որում նշված է.

«2025 թվականի հոկտեմբերի 17-ին թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կայացվել է N 27-Ա որոշումը՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին մասնակցելու համար «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին: Այն գլխավորում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 2025 թվականի հուլիսի 15-ի N 616-Ա որոշմամբ Վաղարշապատ խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված Արգիշտի Մեխակյանը, ով մինչ այդ զբաղեցնում էր ՀՀ Արմավիրի մարզպետի պաշտոնը:

Մինչ այդ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 14-ին ընդունվել և հուլիսի 16-ին ուժի մեջ է մտել ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որով Խոյ և Վաղարաշապատ համայնքները միավորվել են մեկ համայնքում՝ «Վաղարաշապատ» անվանումով:

Արդեն 2025 թվականի հոկտեմբերի 22-ին մեկնարկել է Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը, սակայն ինչպես դրա մեկնարկից սկսած, այնպես էլ անմիջապես նախորդող օրերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և հատկապես ընտրական ցուցակը գլխավորող, Վաղարաշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանի կողմից թույլ են տրվել ՀՀ ընտրական

օրենսգրքի բազմաթիվ խախտումներ, որոնք ունեցել են շարունակական և համակարգված բնույթ, խաթարել են ընտրությունների բնականոն ընթացքը և կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա: Արգիշտի Մեխակյանը, որպես համայնքի ղեկավարի պաշտոնակատար, նախընտրական քարոզչության շրջանակներում խախտել է ՀՀ ընտրական օրենսգրքի սկզբունքները՝ կապված նախընտրական քարոզչության կազմակերպման և հավասար հնարավորություններ ապահովելու հարցում: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված են համայնքի ղեկավարի լիազորությունները, ի թիվս այլնի, հավաքների անցկացման թույլտվության (հոդված 39), համայնքի բարեկարգման (հոդված 42) և արտաքին գովազդային վահանակներ տեղադրելու թույլտվության տրամադրման (հոդված 45) բնագավառներում: ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված են համայնքի ղեկավարի պարտականությունները նաև նախընտրական քարոզչության շրջանակներում հանդիպումների կազմակերպման համար համայնքին պատկանող դահլիճներ տրամադրելու (հոդված 19, մաս 2) և քարոզչական պաստառներ, տպագիր կամ այլ նյութեր փակցնելու համար առանձնացված վահանակներ փակցնելու մասով (հոդված 21): Սրա շրջանակներում օգտվելով օրենքով համայնքի ղեկավարին ընձեռնված լիազորություններից, Արգիշտի Մեխակյանը խոչընդոտներ է ստեղծել այլ քաղաքական ուժերի կողմից պաստառներ փակցնելու, դահլիճների օգտագործման, հավաքների անցկացման մասով՝ ապահովելով իր նախընտրական քարոզչության համար առավել լայն հնարավորություններ՝ սահմանափակելով այլ քաղաքական ուժերի գործունեությունը, այս դեպքում՝ «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության մասով:

Այսպիսով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններում գլխավորող Արգիշտի Մեխակյանի և նշված կուսակցության այլ ներկայացուցիչների կողմից ընտրախախտումները դրսևորվել են հետևյալ ձևերով՝

1. Նախընտրական քարոզչության պաստառներն արգելված վայրերում փակցնելով,
2. նախընտրական քարոզչությանը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցելով,
3. վարչական ռեսուրսի լայնածավալ և համատարած օգտագործմամբ արտաքին գովազդային վահանակների մասով,
4. Վաղարշապատի համայնքապետարանի խտրական մոտեցման դրսևորմամբ՝ համայնքին պատկանող դահլիճի և հավաքների անցկացման թույլտվության տրամադրման մասով, ինչպես նաև Արգիշտի Մեխակյանի նախընտրական քարոզչությանը հանրային ծառայողների մասնակցությամբ,
5. ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված *«բարեգործության արգելքի խախտում»* առերևույթ հանցանքի կատարմամբ:

Վերը նշված ընտրախախտումների հիմքով, համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասի, «Քաղաքացիական պայմանագիր»

կուսակցության ընտրական ցուցակի գրանցման մասին 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N 27-Ա որոշումը պետք է ճանաչվի ուժը կորցրած:»: (...)

Դիմումում առանձին կետերով ներկայացված են ենթադրյալ խախտումներին առնչվող հանգամանքներ, դրանց վերաբերյալ հիմնավորումներ, վերլուծություններ և գնահատականներ:

Դիմումում նշված է պահանջ՝ «սույն դիմումի հիման վրա հարուցել վարչական վարույթ և համապատասխան դիմում ներկայացնել իրավասու դատարան՝ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N 27-Ա որոշումը՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին ուժը կորցրած ճանաչելու պահանջով:»:

1.2. Դիմումը ստորագրված է Դիմումատուի լիազոր ներկայացուցիչներ՝ Հովհաննես Խուդոյանի և Հարություն Խաչիկյանի, ինչպես նաև ներկայացուցիչ՝ փաստաբան Սերգեյ Սարգսյանի կողմից

Դիմումին կից ներկայացվել է՝

1. «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության վերաբերյալ քաղվածք առ 29.09.2025թ.՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից,
2. «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության նախագահ Անդրանիկ Նորիկի Թևանյանի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
3. Հարություն Ասատուրի Խաչիկյանի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
4. Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի անձը հաստատող փաստաթղթի և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը,
5. Սերգեյ Մամիկոնի Սարգսյանի անձը հաստատող փաստաթղթի և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենները,
6. Հարություն Ասատուրի Խաչիկյանին և Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանին տրամադրված «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչը լինելը հավաստող վկայականի պատճենները,
7. Սերգեյ Մամիկոնի Սարգսյանին տրված լիազորագիր,
8. «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցությանը Վաղարշապատի համայնքի ավագանու ընտրություններում գրանցելու վերաբերյալ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման պատճենը,
9. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի «Ֆեյսբուք» սոցիալական կայքի իր էջում առկա հրապարակումների առկայությունը հավաստող տեսանյութ՝ էլեկտրոնային կրիչով,
10. ՀՀ Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանի՝ «Ֆեյսբուք» սոցիալական կայքի էջում առկա հրապարակումների առկայությունը հավաստող տեսանյութ՝ էլեկտրոնային կրիչով,

11. Վաղարշապատի համայնքապետարանի կայքէջում և «Ֆեյսբուք» սոցիալական կայքի էջում առկա հրապարակումների առկայությունը հավաստող տեսանյութ՝ էլեկտրոնային կրիչով,
12. Խոյի համայնքապետարանի կայքէջում և «Ֆեյսբուք» սոցիալական կայքի էջում առկա հրապարակումների առկայությունը հավաստող տեսանյութ՝ էլեկտրոնային կրիչով,
13. Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N 27-Ա որոշման պատճենը,
14. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 2025 թվականի հուլիսի 15-ի N 616-Ա որոշման պատճենը,
15. ֆեյսբուքյան օգտատեր, լրագրող Լիա Սարգսյանի կողմից հրապարակած տեսանյութը՝ էլեկտրոնային կրիչով,
16. ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավար մարմնի անդամ Արայիկ Հարությունյանի գրառման էկրանակադր՝ կապված Արգիշտի Մեխակյանի առաջադրման հետ,
17. Դավիթ Խուդաթյանի և Վահրամ Խաչատրյանի՝ արձակուրդում գտնվելու վերաբերյալ որոշումների էկրանակադրեր,
18. Արգիշտի Մեխակյանի և Լյուդվիկ Յայլոյանի կողմից կայացված որոշումների էկրանակադրեր՝ կապված «Կարեն Կարապետյան» անհատ ձեռնարկատիրոջը Վաղարշապատ և Խոյ համայնքներում արտաքին գովազդային վահանակներ տեղադրելու վերաբերյալ,
19. Հավաքը սահմանափակումներով անցկացնելու վերաբերյալ որոշման պատճենը և էկրանակադր Վաղարշապատի համայնքապետարանի կայքէջից,
20. Վաղարշապատի համայնքապետարանի ներկայացրած գրությունների պատճենները՝ ի պատասխան «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության և ընտրական ցուցակի թեկնածուի դիմումներին՝ էջմիածնում գտնվող «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճում հանդիպումներ անցկացնելու վերաբերյալ,
21. էջմիածնում գտնվող «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճում անցկացված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական հանդիպման տեսանյութը՝ էլեկտրոնային կրիչով,
22. էկրանակադրեր՝ հանրային և քաղաքացիական ծառայողների՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ,
23. Գոհար Գազազյանի ֆեյսբուքյան էջից էկրանակադր,
24. Լեռնամեռձի հիմնական դպրոցի ուսուցչի հարցազրույցի տեսանյութը՝ էլեկտրոնային կրիչով,
25. Արգիշտի Մեխակյանի պաստառների՝ արգելված վայրերում փակցված լինելու վերաբերյալ էկրանակադրեր և տեսանյութեր՝ էլեկտրոնային կրիչով,

26. Արտաքին գովազդային վահանակների վրա Արգիշտի Մեխակյանի նախընտրական քարոզչության պաստառներ փակցված լինելու վերաբերյալ տեսանյութեր և էկրանակադրեր՝ էլեկտրոնային կրիչով,
27. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջում հրապարակված Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների համար նախատեսված դահլիճների ցանկը,
28. 2025 թվականի հոկտեմբերի 10-ի դրությամբ՝ արտաքին գովազդային վահանակ տեղադրելու վերաբերյալ էկրանակադր և տեսանյութ՝ էլեկտրոնային կրիչով,
29. Էկրանակադրեր Վաղարշապատի համայնքապետարանի էջից:

2. Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

2.1. Դիմումով հարուցված վարչական վարույթի շրջանակներում թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 10-ին հրավիրել է նիստ, որին ներկայացել են Դիմումատուի լիազոր ներկայացուցիչներ՝ Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանը և Սերգեյ Մամիկոնի Սարգսյանը, Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի ներկայացուցիչ Երվանդ Վալերիկի Խաչատրյանը, Կարինե Սեյրանի Եսայանը և Լիլիթ Վարդանի Հակոբյանը, ինչպես նաև Քաղաքացիական պայմանագիր կուսակցության լիազոր ներկայացուցիչ Բարսեղ Հրահատի Նիկողոսյանը:

Դիմումատուի ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց դիրքորոշումները, որոնք արտացոլված են դիմումում:

Ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հանգել է հետևյալին.

2.2. Դիմումի՝ «Նախընտրական քարոզչության պաստառներն արգելված վայրերում փակցնելու մասին» վերտառությամբ 1-ին ենթակետում նշվում է, որ «Նախընտրական քարոզչության մեկնարկից՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ից սկսած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Վաղարշապատ և Խոյ համայնքների ամբողջ տարածքում ՀՀ ընտրական օրենսգրքով արգելված վայրերում փակցրել է նախընտրական քարոզչության պաստառներ»:

Նախընտրական քարոզչության իրավական կարգավորումը սահմանված է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 19-23-րդ հոդվածներով: Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու

նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին»:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների շրջանակներում նախընտրական քարոզչության մեկնարկից ամենօրյա ռեժիմով կատարում է շրջայցեր Վաղարշապատ համայնքում, որի շրջանակներում 2025 թվականի հոկտեմբերի 22-ին արձանագրել է, որ նախընտրական քարոզչական պաստառներ և այլ նյութեր փակցված են Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2.1-րդ մասի պահանջների խախտմամբ: Նշված հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, գնահատելով իրավիճակը որպես օպերատիվ լուծում պահանջող հարց և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասով, հեռախոսային զանգի միջոցով իրազեկել է Վաղարշապատ համայնքի ղեկավարին՝ նշելով խախտմամբ փակցված պաստառները վերացնելու անհրաժեշտության մասին:

Խախտմամբ փակցված պաստառները վերացվել են շատ արագ, դրան հաջորդող օրը՝ հոկտեմբերի 23-ին, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը շրջայցի արդյունքներով արձանագրել է, որ խախտմամբ փակցված նախընտրական քարոզչական պաստառներ առկա չեն:

Վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզել է, որ դիմումին կից ներկայացված է տեսանյութ, որում տեսանկարահանված է չթույլատրված վայրերում քարոզչական նյութերի փակցման գործընթացը: Դիմումում նշված է, որ «ֆեյսբուքյան օգտատեր, լրագրող Լիա Սարգսյանի կողմից հրապարակվել է տեսանյութ՝ բովանդակությամբ, թե ինչպես են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 1-ին համար Արգիշտի Մեխակյանի նախընտրական քարոզչական պաստառները փակցվում Վաղարշապատի համայնքապետարանի բարեկարգման բաժնի աշխատակիցների կողմից:»:

Հաշվի առնելով, որ «համայնքապետարանի աշխատակիցների մասնակցությամբ և համայնքի բյուջեի միջոցների հաշվին» նաընտրական քարոզչական պաստառներ փակցնելուն առնչվող հանգամանքները, հնարավոր է, պարունակում են քրեաիրավական բնույթի հատկանիշներ, թիվ 14 ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովը գտնում է, որ դրանց վերաբերյալ նյութերը պետք է ուղարկվեն իրավապահ մարմիններին:

2.3. Դիմումի՝ «Նախընտրական քարոզչությանը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցության մասին» վերտառությամբ 2-րդ ենթակետում նշվում է, որ «Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների մինչնախընտրական քարոզչության հատվածից և արդեն ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածից դրան ակտիվ մասնակցություն են ունեցել ինչպես Վաղարշապատ համայնքն ընդգրկող Արմավիրի մարզի մարզպետ Վահրամ Խաչատրյանը, այնպես էլ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը՝ խախտելով հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելու արգելքի մասով ՀՀ ներպետական օրենսդրությունը»:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է դիմումի թվով 11 էջերում (13-19, 21-24) զետեղված հղումները, որոնք վերաբերվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի (13-19 էջեր) և Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանի (21-24 էջեր) մասնակցությանը նախընտրական քարոզչությանը և, ըստ դիմումատուի, հանդիսանում են նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում:

2.3.1. Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ դիմումի 13-19-րդ էջերի 1-10 կետերում և 21-24-րդ էջերի 1-4 կետերում զետեղված հղումներում ներկայացված նյութերը չեն վերաբերվում նախընտրական քարոզչության ժամանակահատվածին:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:»:

Նշված իրավակարգավորումից ակնհայտ է, որ հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կանոնները գործում են նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:»:

Նշված իրավակարգավորումների հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածից դուրս ժամանակահատվածում իրականացված քարոզչության հանգամանքները չպետք քննարկման առարկա հանդիսանան սույն վարչական վարույթի շրջանակներում:

2.3.2. Մնացած հղումների դիտմամբ պարզվեց, որ դիմումի 13-19-րդ էջերի 14-22, 30-32 կետերում և 21-24-րդ էջերի 7, 9-12, 18, 19, 21 կետերում զետեղված հղումներում (13-19-րդ էջերի 14, 19, 20, 22, 30 և 31 կետերում և 21-24-րդ էջերի 10, 11, 18 կետերում նշված հղումները նույնն են) ներկայացված են 2025 թվականի հոկտեմբերի 25-ին և 26-ին, նոյեմբերի 1-ին և 2-ին (շաբաթ և կիրակի՝ ոչ աշխատանքային օրեր են) անցկացված նախընտրական քարոզչական միջոցառումներին:

Դիմումի 18-19-րդ էջերի 26 և 27 կետերում և 24-րդ էջի 20 կետում զետեղված նյութերը վերաբերվում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավի շրջանակներում կազմակերված հանդիպմանը, որը տեղի է ունեցել Արմավիր մարզի Վաղարշապատ խոշորացված համայնքի էջմիածին քաղաքի, Մ.Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճում:

Նույն էջերի (13-19, 21-24) մյուս կետերում զետեղված հղումների ուսումնասիրմամբ պարզվեց, որ դիմումի 13-19-րդ էջերի 11-13 կետերում և 21-24-րդ էջերի 8 և 15 կետերում զետեղված հղումներում առկա նյութերը չեն վերաբերվում վերը նշված պաշտոնատար անձանց: Նշված նյութերում ներկայացված հանգամանքների ուսումնասիրությամբ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ չեն արձանագրվել:

Ուսումնասիրելով դիմումով ներկայացված հանգամանքները, դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև սույն վարչական վարույթի շրջանակներում թիվ 14 ընտրատրաածքային ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ ձեռք բերված նյութերը, թիվ 14 ընտրատրաածքային ընտրական հանձնաժողովը պարզել է, որ 2025 թվականի հոկտեմբերի 29-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը նախընտրական հանդիպում է կազմակերպել ընտրողների հետ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի միջև 28.10.2025թ. կնքած Դահլիճի վարձակալության պայմանագրի համաձայն, որով նշված պայմանագրի 1-ին կետով որպես պայմանագրի առարկա նշված է «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճը, իսկ նույն պայմանագրի 7-րդ կետով որպես պայմանագրի գործողության ժամկետ նշված է 29.10.2025թ. ժամը 19:00-20:00:

Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության 1-ին ենթակետի համաձայն՝ «Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.»:

Նշված իրավակարգավորումից ակնհայտ է, որ «հանրային ծառայության մեջ գտնվողներին», ինչպիսինք են, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գնահատմամբ, հանրային ծառայության պաշտոններ և հանրային

պաշտոններ զբաղեցնող անձինք, զրկված չեն նախընտրական քարոզչություն կազմակերպելու և իրականացնելու իրավունքից, այլ պետք է իրենց այդ իրավունքն իրականացնեն որոշակի սահմանափակումներով, մասնավորապես՝ չկատարել նախընտրական քարոզչության կազմակերպում ու իրականացում՝ իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս: Ակնհայտ է, որ այն դեպքերում, երբ «հանրային ծառայության մեջ գտնվողը» չի իրականացնում իր լիազորությունները կամ հանդես չի գալիս ի պաշտոնե և մասնակցում է քարոզչական միջոցառումներին, կազմակերպում կամ իրականացնում է նախընտրական քարոզչություն, ապա նման մասնակցությունը նախընտրական քարոզչությանը չի կարող գնահատվել որպես նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումի 13-19-րդ էջերի 14- 22, 26, 27, 30-32 կետերում և 21-24-րդ էջերի 7, 9-12, 18-21 կետերում զետեղված հղումներում ներկայացված են դրվագներ, որոնցում Վահրամ Խաչատրյանը ու Դավիթ Խուդթյանը մասնակցում են նախընտրական քարոզչությանը միայն ոչ աշխատանքային օրերին և/կամ ժամերին, հետևապես նշված դրվագները չեն կարող որակվել որպես նախընտրական քարոզչության Ընտրական օրենսգրքով սահմանված կանոնների խախտումներ:

2.3.3. Դիմումի 17-19-րդ էջերի 23-25, 28, 29 (17-18-րդ էջերի 23 և 25 կետերը համընկնում են 23-րդ էջերի 14 և 16 կետերի հետ) կետերում զետեղված հղումներում առկա նյութերը վերաբերվում են Դավիթ Խուդթյանի Ֆեյսբուք սոցիալական ցանցի էջում տեղ գտած հրապարակումներին, որոնք ներառում են քարոզչական նյութեր: Ներկայացված նյութերի և Ֆեյսբուք սոցիալական ցանցի «Davit Khudatyan/Դավիթ Խուդթյան» օգտատիրոջ էջի ուսումնասիրությամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզել է, որ այն ստեղծվել է 2018 թվականի հուլիսի 8-ին՝ որպես քաղաքական գործիչ Դավիթ Խուդթյանի անձնական էջ:

Դիմումի 21-րդ էջի 5 կետում զետեղված հղումը վերաբերվում է Վահրամ Աշոտի Խաչատրյան օգտատիրոջ Ֆեյսբուք սոցիալական ցանցի էջում տեղ գտած հրապարակումներին, որոնք ներառում են քարոզչական նյութեր:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ հանրային ծառայության մեջ գտնվող անձի սոցիալական հարթակներում ունեցած անձնական օգտահաշիվները ինքնին չեն կարող որակվել որպես լիազորությունների իրականացում կամ ի պաշտոնե հանդես գալ, հետևապես դիմումով ներկայացված հանգամանքներում Ընտրական օրենսգրքի նորմերի խախտումներ առկա չեն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումի 13-19-րդ էջերի 23-25, 28 և 29 կետերում զետեղված հղումներում առկա նյութերում նախընտրական քարոզչության Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի խախտումներ առկա չեն:

2.3.4. Դիմումատուն նշում է նաև, որ «ինչպես Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական կայքով, այնպես էլ Խոյի համայնքապետարանի

պաշտոնական կայքով 2025 թվականի հոկտեմբերի 7-ից լուսաբանվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակի 1-ին համարի գործունեությունը»:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով նշված էջերի հղումները, պարզել է, որ նրանք պարունակում են Վաղարշապատ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանի, ինչպես նաև Խոյ համայքնի ղեկավար Լյուդվիկ Յայլոյանի աշխատանքային գործունեության լուսաբանում: Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.4-րդ մասի համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող թեկնածուների լիազորությունների իրականացման վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունները չեն համարվում նախընտրական քարոզչություն: Այդպիսի հաղորդագրությունները չպետք է պարունակեն քարոզչական բնույթի մեկնաբանություններ կամ ներկայացնեն տվյալ պաշտոնատար անձի՝ որպես թեկնածուի գործունեությունը լուսաբանող տեսաձայնային հոլովակներ, ֆիլմեր կամ նկարներ, որոնք կարող են ասոցացվել նախընտրական քարոզչության հետ:»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումի 25-28-րդ էջերում զետեղված հղումներում առկա նյութերում (դիմումին կից ներկայացված Վաղարշապատի և Խոյի համայնքապետարանի պաշտոնական կայքէջի էկրանակադրեր) նախընտրական քարքզչության սահմանված կարգի խախտումներ առկա չեն:

2.4. Դիմումի՝ «Վարչական ռեսուրսի լայնածավալ և համատարած օգտագործում արտաքին գովազդային վահանակների մասով» վերտառությամբ 3-րդ ենթակետում նշվում է, որ «նախընտրական քարոզչությանն անմիջապես նախորդող օրերին ամբողջ Վաղարշապատ համայնքի տարածքում տեղադրվել են արտաքին գովազդային վահանակներ, որոնց վրա արդեն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում փակցվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 1-ին համարի քարոզչական պաստառները»: Դիմումում նշված է, որ «վահանակների տեղադրման թույլտվությունը տրամադրել է Վաղարշապատի համայնքապետի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանը՝ 2025 թվականի հոկտեմբերի 21-ին՝ նախընտրական քարոզչության մեկնարկի նախօրեին, որի հայտը ներկայացված է եղել 2025 թվականի հոկտեմբերի 17-ին, սակայն ներկայացված վահանակների տեղադրման աշխատանքները արդեն իսկ ընթանում էին 2025 թվականի հոկտեմբերի 10-ին»: Որպես ապացույց դիմումին կից ներկայացվել է Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական կայքի՝ որոշումը պարունակող էջի հղումը և նույն էջից տպված որոշումը պարունակով էկրանակադրը, ինչպես նաև ներկայացված հանգամանքներին առնչվող տեսանյութ: Դիմումում նշված է նաև, որ «հայտը ներկայացրել է «Կարեն Կարապետյան» անհատ ձեռնարկատերը, որի վերաբերյալ Վաղարշապատի համայնքապետարանում և համացանցային այլ աղբյուրներում տեղեկություններ առկա չեն:»:

Դիմումատուները նշում են, որ «Վաղարշապատի համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցները հրաժարվել են տրամադրել տեղեկատվություն, որով հնարավոր կլիներ նույնականացնել վերը նշված ԱՁ-ն և կապ հաստատել: Վաղարշապատի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցները ԱՁ-ի կոնտակտային և այլ վերաբերելի տվյալները հրաժարվել են տրամադրել՝ նշելով, որ դրանք անձնական տեղեկություններ են և հնարավոր չէ դրանք փոխանցել այլ անձի:»: Ուսումնասիրելով ներկայացված պնդումները և դիմումին կից ներկայացված փաստաթղթերն ու նյութերը՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ վերը նշված պնդումների վերաբերյալ ապացույցներ դիմումատուն չի ներկայացրել: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 6-ի N Ե-35 գրությամբ դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ պահանջելով ներկայացնել դիմումատուի՝ «Կարեն Կարապետյան» անհատ ձեռնարկատիրոջ տվյալներ տրամադրելու վերաբերյալ դիմումը և դրան տրված պատասխանը: Վաղարշապատի համայնքապետարանից 2025 թվականի նոյեմբերի 7-ին ստացված թիվ 2643 գրությամբ հաղորդվել է, որ Վաղարշապատի համայնքապետարանում նման դիմում չի ստացվել: Վերը նշվածի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումատուի գնահատականն առ այն, որ «Վաղարշապատ արդեն խոշորացված համայնքի ամբողջ տարածքում տեղադրված արտաքին գովազդային վահանակները ամբողջությամբ տրամադրված են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը» և որ «...սա ևս անհավասար պայմաններ է ստեղծել մյուս քաղաքական ուժերի համար՝ հնարավորություն չտալով նախընտրական քարոզչության, ծրագրային դրույթների, գաղափարախոսության ներկայացման և թեկնածուի ու կուսակցության մասին տեղեկությունների տարածման», անհիմն են: Սույն վարչական վարույթի շրջանակներում չի հաջողվել ձեռք բերել ապացույցներ առ այն, որ արտաքին գովազդային վահանակները տնօրինող «Կարեն Կարապետյան» Ա/Ձ-ը չի ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

2.5. Դիմումի՝ «Վաղարշապատի համայնքապետարանի խտրական մոտեցումը համայնքին պատկանող դահլիճի և հավաքների անցկացման թույլտվության տրամադրման մասով և հանրային ծառայողների մասնակցությունը նախընտրական քարոզարշավին» վերտառությամբ 4-րդ ենթակետում նշվում է, որ «սկսած 2025 թվականի սեպտեմբերի 29-ից «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության և կուսակցության ցուցակում ընդգրկված թեկնածուի կողմից ներկայացվել են բազմաթիվ դիմումներ Վաղարշապատի համայնքապետարան՝ Վաղարշապատ համայնքի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճում ընտրողների հետ հանդիպումներ և երթ անցկացնելու համար, սակայն բոլոր դիմումները մերժվել են համայնքապետարանի կողմից:»:

Վարչական վարույթի շրջանակներում թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 6-ի N Ե-35 գրությամբ դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ պահանջելով ներկայացնել դիմումատուների՝ երթ անցկացնելու մասին իրազեկումները և դրանց տրված պատասխանները: Վաղարշապատի համայնքապետարանից 2025 թվականի նոյեմբերի 7-ին ստացված թիվ 2643 գրությամբ ներկայացվել են երթ անցկացնելու մասին թվով մեկ իրազեկում, որի կապակցությամբ որոշվել է ոչ թե մերժել երթը, այլ այն անցկացնել սահմանափակումներով՝ առաջարկելով երթն անցկացնել հայցված ուղու երթևեկելի տարածքից դուրս, քանի որ այն անխուսափելիորեն կհանգեցնի անձանց հիմնական իրավունքների (ազատ տեղաշարժվելու իրավունք՝ ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդված)՝ ներառյալ հանրության շահերի անհամաչափ սահմանափակման, կառաջացնի նաև երթևեկության ծանրաբեռնվածություն: Դիմումատուն դիմումին կից ներկայացրել է նաև Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 17.10.2025թ. N 4357 գրությամբ տրված՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 17.10.2025թ. թիվ 1109-Ա որոշումը և Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական կայքի՝ իրազեկման մասին որոշումը պարունակող էջի հղումը և նույն էջից տպված էկրանակադրը: Հետևաբար, դիմումատուների պնդումն առ այն, որ երթ անցկացնելու համար իրազեկումները «բոլորը ... մերժվել են համայնքապետարանի կողմից», իրականությանը չի համապատասխանում:

Վարչական վարույթի շրջանակներում թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 6-ի N Ե-35 գրությամբ դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ պահանջելով ներկայացնել դիմումատուի՝ դահլիճ տրամադրելու մասին դիմումները և դրանց տրված պատասխանները:

Վաղարշապատի համայնքապետարանի 2025 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 2643 գրությամբ ներկայացվել են դահլիճ տրամադրելու մասին դիմումատուի թվով 5 դիմումներ և դրանց տրված պատասխանները: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրմամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ.

1) Հարություն Ասատուրի Խաչիկյանի կողմից 29.09.2025թ. ներկայացվել է դիմում՝ հոկտեմբերի 11-ին և 12-ին՝ ժամը 16:00-19:00, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը տրամադրելու խնդրանքով: Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն՝ «1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:»: Հանրային ռեսուրսներից են նաև ընտրությունների հետ

կապված միջոցառումներ կազմակերպելու նպատակով ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), թեկնածուներին անվճար տրամադրվող դահլիճներն ու այլ շինություններ: Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետությունն ապահովում է նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները թեկնածուներին ու ընտրություններին մասնակցող կուսակցություններին կարող են տրամադրվել միայն ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին և միայն այն դեպքերում, եթե տվյալ բնակավայրում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն նախընտրական քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ:»:

Վերը նշված իրավակարգավորումների վերլուծությամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ անվճար հիմունքներով դահլիճներն ու այլ շինությունները տրամադրվում են կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), թեկնածուներին ***նախընտրական քարոզչության*** իրականացման համար, որը Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների շրջանակներում մեկնարկարկել է 2025 թվականի հոկտեմբերի 22-ից: Ուստի, նշված դահլիճը նախընտրական քարոզչության համար դիմումումնշված օրերին անվճար հիմունքնրով չէր կարող տրամադրվել, թեև Վաղարշապատի համայնքապետարանի 06.10.2025թ. թիվ 4170 գրությամբ պատասխանվել է, որ «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճն այդ օրերին զբաղված է մշակութային միջոցառումներով:

2) Հարություն Ասատուրի Խաչիկյանի կողմից 08.10.2025թ. ներկայացվել է դիմում՝ հոկտեմբերի 22-ին՝ ժամը 16:00-19:00, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը տրամադրելու խնդրանքով: Դիմումում նշվել է, որ այն չի վերաբերվում դահլիճն անվճար տրամադրելուն:

Վաղարշապատի համայնքապետարանի 10.10.2025թ. թիվ 4218 գրությամբ պատասխանվել է, որ «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճը 2025 թվականի հոկտեմբերի 22-25-ը զբաղված է մշակութային միջոցառումներով՝ վկայակոչելով Վաղարշապատ համայնքի ղեկավարի 24.09.2025թ. 980-Ա որոշումը, որն առկա է դիմումին ներկայացված փաստաթղթերում:

3) Հարություն Ասատուրի Խաչիկյանի կողմից 13.10.2025թ. ներկայացվել է դիմում՝ նոյեմբերի 13-ին՝ ժամը 15:00-19:00, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը տրամադրելու խնդրանքով:

Վաղարշապատի համայնքապետարանի 15.10.2025թ. թիվ 4275 գրությամբ պատասխանվել է, որ դիմումը ներկայացված է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ՝ առաջարկելով այն շտկել:

4) Հարություն Ասատուրի Խաչիկյանի կողմից 16.10.2025թ. ներկայացվել է դիմում՝ նոյեմբերի 13-ին՝ ժամը 16:00-19:00, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը տրամադրելու խնդրանքով:

Վաղարշապատի համայնքապետարանի 17.10.2025թ. թիվ 4356 գրությամբ պատասխանվել է, որ դիմումին կից ներկայացված չէ դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճենը, ինչը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26.08.2021թ. N 208-Ն որոշմամբ պարտադիր պահանջ է:

5) «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության վարչության անդամ, կուսակցության լիազոր ներկայացուցիչ Հարություն Ասատուրի Խաչիկյանի կողմից 22.10.2025թ. ներկայացվել է դիմում՝ նոյեմբերի 13-ին՝ ժամը 16:00-19:00, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը տրամադրելու խնդրանքով: Դիմումից կից ներկայացվել է Դիմումատուի լիազոր ներկայացուցչի լիազորությունները հավաստող՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված նմուշի վկայականի պատճենը:

Վաղարշապատի համայնքապետարանի 23.10.2025թ. թիվ 4509 գրությամբ պատասխանվել է, որ նշված օրը՝ նույն ժամերի համար այլ կուսակցությունից ավելի վաղ ստացվել է դիմում, և դահլիճը տրամադրվել է այդ կուսկացությանը: Միաժամանակ, առաջարկվել է նույն օրվա այլ ժամերին տրամադրել պահանջվող դահլիճը: Վաղարշապատի համայնքապետարանի 2025 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 2643 գրությանը կից ներկայացված է նաև Հանրապետություն կուսակցության ներկայացուցիչ Վազգեն Հովսեփյանի 20.10.2025թ. դիմումը և դրան տրված Վաղարշապատի համայնքապետարանի 21.10.2025թ. N 4439 գրությամբ տրված պատասխանը:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումատուի՝ դահլիճ տրամադրելու մասին դիմումները չեն համապատասխանել օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին և դրանցով ներկայացվող պահանջներն իրավաչափորեն չեն ապահովվել, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26.08.2021թ. N 208-Ն որոշմամբ սահմանված կարգով առաջարկվել են այլընտրանքային լուծումներ:

Ներկայացված դիմումների և դրանց պատասխանների ուսումնասիրությամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ Դիմումատուի 13.10.2025թ. և 16.10.2025թ. դիմումները՝ Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը տրամադրելու խնդրանքով, չեն բավարարվել այնպիսի ձևական պահանջներ խախտված լինելու հիմնավորմամբ, որոնք կարող էին շտկվել, և հաջորդիվ ներկայացված դիմումներում շտկվել են: Այսպես, Հարություն Ասատուրի Խաչիկյանի կողմից 13.10.2025թ. ներկայացված դիմումով հայցվում էր Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճի տրամադրում նոյեմբերի 13-ին չորս ժամով՝ ժամը 15:00-19:00 այն դեպքում, երբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26.08.2021թ. N 208-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N1 հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ «ցանկում ներառված նույն դահլիճը, սույն կարգով ընտրություններին մասնակցող միևնույն կուսակցությանը տրամադրվում է մեկ անգամ և մինչև 3 ժամ տևողությամբ:»:

Դիմումատուի լիազոր ներկայացուցիչ Հարություն Ասատուրի Խաչիկյանի կողմից 16.10.2025թ. ներկայացված դիմումին կից ներկայացված չի եղել Դիմումատուի լիազոր ներկայացուցչի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը, ինչը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26.08.2021թ. N 208-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 7-րդ կետի պահանջ է: Դիմումատուի լիազոր ներկայացուցիչ Հարություն Ասատուրի Խաչիկյանը 22.10.2025թ. ներկայացրել է նույն բովանդակությամբ ևս մեկ դիմում՝ կցելով նաև Դիմումատուի լիազոր ներկայացուցչի վկայականի պատճենը, սակայն Վաղարշապատի համայնքապետարանը չի ապահովել դահլիճի տրամադրումը պահանջվող ժամերին՝ նշելով, որ նույն ժամերի համար այլ կուսակցություն դիմել է ավելի վաղ: Ի հավաստումն նշվածի՝ Վաղարշապատի համայնքապետարանն իր 2025 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 2643 գրությանը կից ներկայացրել է Հանրապետություն կուսակցության ներկայացուցիչ Վազգեն Հովսեփյանի 20.10.2025թ. դիմումը: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձննաժողովը գտնում է, որ Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) համար հավասար պայմաններ ապահովելու տեսանկյունից 2025 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 16:00-19:00, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը տրամադրելու խնդրանքով Դիմումատուի կողմից դիմումի ներկայացման ժամկետ Վաղարշապատի համայնքապետարանը պետք է համարի ոչ թե 22.10.2025թ., այլ 13.10.2025թ.:

Վերոգրյալի կապակցությամբ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձննաժողովի 10.11.2025թ. նիստին ներկայացած՝ Վաղարշապատի համայնքապետարանի ներկայացուցիչը՝ Երվանդ Խաչատրյանը ի պատասխան թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձննաժողովի նախագահի հարցին, թե ինչ իրավական հիմքերով են մերժվել դիմումատուի 13.10.2025թ., 16.10.2025թ.

դիմումները, նշեց, որ մերժման հիմք հանդիսացել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26.08.2021թ.-ի 208-Ն որոշումը: Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձննաժողովը արձանագրում է, որ 13.10.2025-ին դիմումին տրված պատասխանում նշված է, որ այն «չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին», և մատնանշված չէ թե, որոշման որ կետի խախտմամբ է ներկայացված:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձննաժողովը գտնում է, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող Կոմիտասի անվան մշակույթի պալատի դահլիճը 2025 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 16:00-19:00 տրամադրելու դիմում ավելի վաղ ներկայացվել է Դիմումատուի կողմից: Հետևապես, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հաձննաժողովը գտնում է, որ Վաղարշապատի համայնքապետարանը պետք է տրամադրի պահանջվող դահլիճը՝ Դիմումատուի նշված ժամկետում՝ միաժամանակ ապահովելով նույն օրը այլ ժամերին ընտրություններին մասնակցող այլ կուսակցություններին (կուսակցությունների դաշինքին) դահլիճից օգտվելու հավասար պայմաններ:

Դիմումում նշված է. «2025 թվականի հոկտեմբերի 29-ի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական հանդիպմանը մասնակցել են հանրային և քաղաքացիական ծառայողներ՝ խախտելով քաղաքական զսպվածության և չեզոքության կանոնները՝ անկախ արձակուրդում գտնվելու և ոչ աշխատանքային ժամերին մասնակցելու հանգամանքներից:»: Դիմումին կից ներկայացված են թվով 7 լուսանկար (էկրանակադրեր), որոնք վերնագրված են դիմումատուի կողմից, ինչն էլ հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ դրանք վերաբերվում են 2025 թվականի հոկտեմբերի 29-ի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական հանդիպմանը:

Սույն որոշման 2.3.2. կետում արդեն իսկ անդրադարձ է կատարվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական հանդիպմանը, որը կայացել է «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճում՝ 29.10.2025թ. ժամը 19:00-20:00: Դիմումում նշված են հանրային ծառայության մեջ գտնվող, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներ հանդիսացող մի շարք անձինք:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն, քաղաքական զսպվածություն և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով:»:

Նույն օրենքի 27.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային ծառայողներն իրավունք ունեն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք»

սահմանադրական օրենքով սահմանված կարգով մասնակցելու նախընտրական քարոզչությանը՝ պահպանելով քաղաքական զսպվածությունը:»:

Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ «Արգելվում են նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.»:

Վերը ներկայացված իրավակարգավորումների վերլուծությամբ թիվ 14 ընտրատրաածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին, պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին արգելվում են ***նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը*** միայն այն դեպքերում, երբ վերջիններս իրականացնում են իրենց լիազորությունները կամ հանդես են գալիս ի պաշտոնե:

Միաժամանակ, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ թիվ 14 ընտրատրաածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ դիմումի՝ «Վաղարշապատի համայնքապետարանի խտրական մոտեցումը համայնքին պատկանող դահլիճի և հավաքների անցկացման թույլտվության տրամադրման մասով և հանրային ծառայողների մասնակցությունը նախընտրական քարոզարշավին» վերտառությամբ 4-րդ ենթակետում ներկայացված անձինք չեն կազմակերպում և չեն իրականացնում նախընտրական քարոզչություն, այլ ժամը 19:00-ից 20:00-ն մասնակցում են քարոզչական հանդիպմանն ունկնդրի դերում: Ուստի, հանրային ծառայության մեջ գտնվող, ուսումնական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների՝ նախընտրական քարոզչական հանդիպմանը ներկա գտնվելուն առնչվող՝ սույն դիմումով ներկայացված հանգամանքներում խախտուներ առկա չեն:

Վերոգրյալի ամփոփմամբ՝ թիվ 14 ընտրատրաածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումի՝ «Վաղարշապատի համայնքապետարանի

խտրական մոտեցումը համայնքին պատկանող դահլիճի և հավաքների անցկացման թույլտվության տրամադրման մասով և հանրային ծառայողների մասնակցությունը նախընտրական քարոզարշավին» վերտառությամբ 4-րդ ենթակետում ներկայացված հանգամանքները չեն կարող որակվել որպես ընտրական օրենսդրության խախտումներ:

2.6. Դիմումի՝ «Բարեգործության արգելքի խախտման մասով» վերտառությամբ 5-րդ ենթակետում նշվում է. «2025 թվականի հոկտեմբերի 21-ին Խոյ համայնքի Դողս բնակավայրում տեղի է ունեցել միջոցառում՝ բարեգործական միջոցառում անվան տակ, որի ընթացքում դրամական միջոցներ և այլ նվերներ են բաժանվել Դողսի բնակիչներին: Այդ միջոցառմանը մասնակցել են Արգիշտի Մեխակյանը, Վահրամ Խաչատրյանը և այլ պաշտոնատար անձինք, որի կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի բարեգործության արգելք խախտում հանցակազմի հատկանիշներով:

Ըստ էության, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները, անտեսելով նախընտրական քարոզչությանը վերաբերող կանոնները և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատիժները արգելված արարքներ կատարելու շուրջ, առերևույթ նախընտրական քարոզչության շրջանակներում հավելյալ քվեներ ստանալու նպատակով մասնակից են եղել վերը նշված միջոցառմանը:

Բարեգործության արգելքի խախտումը, ինչպես ընտրակաշառք տալը, ուղղակի ազդեցություն է ունենում ընտրողի քաղաքական կողմնորոշման հարցում՝ փաստացի որոշակի սահմանափակումներ դնելով անձի՝ ազատ կամքի արտահայտման վրա: Սա առավել քան կարող է ազդել ընտրողների տրամադրությունների վրա՝ էական ազդեցություն ունենալով ընտրությունների արդյունքների վրա:»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման 2.6. կետում ներկայացված հանգամանքներով հարուցված է քրեական վարույթ, դրանք չեն կարող քննվել սույն վարչական վարույթի շրջանակներում:

Միաժամանակ, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ Ընտրական օրենսգրքով սահմանված՝ թեկնածուների կամ ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալու (խոստանալու) կամ ծառայություններ մատուցելու (խոստանալու) ապացույցներ սույն վարչական վարույթի շրջանակներում ներկաայցված չեն, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ևս չի հաջողվել ձեռք բերել նման ապացույցներ:

2.7. Դիմումով ներկայացվել է պահանջ՝ «Սույն դիմումի հիման վրա հարուցել վարչական վարույթ և համապատասխան դիմում ներկայացնել իրավասու դատարան՝ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N 27-Ա որոշումը՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին ուժը կորցրած ճանաչելու պահանջով:»

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

2. Պետությունն ապահովում է նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները թեկնածուներին ու ընտրություններին մասնակցող կուսակցություններին կարող են տրամադրվել միայն ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին և միայն այն դեպքերում, եթե տվյալ համայնքում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն նախընտրական քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ:»:

Նույն հոդվածի 7-րդ հդվածի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:»:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական

հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:»:

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի վկայակոչված իրավանորմերը՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրական հանձնաժողովը կարող է դիմել դատարան՝ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար, եթե առկա են հետևյալ պայմանները՝

ա) առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում.

բ) այդ խախտումը շարունակական բնույթի է և կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա.

գ) այդ խախտումն այնպիսինն է, որի հետևանքները հնարավոր չէ վերացնել, և այն կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

Կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելը գնահատվում է որպես ծայրահեղ միջոց, որը կարող է կիրառվել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի նկատմամբ, միայն այն դեպքում, երբ առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում և նշված խախտումն ունի այն որակումները, որոնք վերը թվարկված են: Միայն այդ պայմաններում կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հարցով ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցության 05.11.2025թ. դիմումը՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N 27-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով իրավասու դատարան դիմում ներկայացնելու մասով, մերժել:

2. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակիցների մասնակցությամբ և համայնքի բյուջեի միջոցների հաշվին նաընտրական քարոզչական պաստառներ փակցնելուն առնչվող սույն դիմումով ներկայացված հանգամանքներին առնչվող նյութերն ուղարկել իրավապահ մարմիններին:

3. Վաղարշապատի համայնքապետարանին՝ ապահովել Վաղարշապատ համայնքի Էջմիածին, Մաշտոցի 75 հասցեում գտնվող «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճի տրամադրումը «Մայր Հայաստան» ազգային-

դեմոկրատական կուսակցությանը՝ 2025 թվականի նոյեմբերի 13-ին՝ դիմումում նշված ժամերին՝ միաժամանակ ապահովելով նույն օրը այլ ժամերին ընտրություններին մասնակցող այլ կուսակցություններին (կուսակցությունների դաշինքին) դահլիճից օգտվելու հավասար պայմաններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ **Գ.Նազարյան**

ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ * ԻՍՆԱԲՈՂՈՎ

ԸԸՀ N14